

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 8

1967

Ա.Ա.ՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ

ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՊՈԵՄ

«Տաղ Տէր Ստեփանոսին՝ Սիմեաց եպիսկոպոսին»

Դեռևս 1940 թվականին, Մատենադարանի ձեռագրերի վրա աշխատելիս, մեր ուշագրությունը գրավեց մի բանաստեղծություն, որը պակասավոր լինելով, բավարար պատկերացում չէր տալիս իր նախնական տեսքի և շոշափած խնդիրների մասին։ Հետագա որոնումների ժամանակ երեան եկան ևս երեք տարրերակներ՝ զգալի լույս սփռելով նշված հարցերի վրա։ Այնուամենայնիվ, շշտապեցինք գրանք հրատարակել, սպասելով լրացուցիչ տեղեկությունների։

1960 թվականի վերջերին Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական նստաշրջանում կարդացած մեր զեկուցման մեջ հազորդում կատարեցինք այդ ստեղծագործության մասին՝ ընդդեմով նրա պատմական, հայրենասիրական ընույթն ու արվեստի առանձնահատկությունները։ 1961 թվականի հունվարին «Սովետական Հայաստան» և «Երեան» թերթերը առանձին հազորդում տպագրեցին մեր այդ զեկուցման մեջ հայտնված գրական նորույթների վերաբերյալ, հատուկ տեղ տալով նաև այդ երկին (պոեմին)։ Քանի որ զա տպագիր տուաշին խոսքն է նրա մասին, ուստի հարկ ենք համարում այն ընդօրինակել այստեղ։

«Միջնադարյան հայ պոեզիայի նորահայտ հուշարձաններից մեկն է «Տաղ Տէր Ստեփանոսին՝ Սյունեաց եպիսկոպոսին» պոեմը, որը բաղկացած է եղել 144 տնից և որի հեղինակը հայտնի չէ։

Պոեմը պատմում է մոնղոլական տիբատետության օրոք Սյունիքում կատարված մեր մատենադրությանն անհայտ մի զեպքի մասին, որը վերաբերում է օտար բանակալության դեմ ժողովրդական հուզումներին»<sup>1</sup>։

Այդ պոեմի մասին հիշատակություն է կատարված նաև մեր մի հոգիածի մեջ՝ 1964 թվականին<sup>2</sup>։

Վերջերս նշված ստեղծագործության վերաբերյալ առանձին հոդվածով հանդես եկամ երիտասարդ բանասեր Պ. Խաչատրյանը, շպիտես ինչու, շրջանցելով պոեմի մասին վերոհիշյալ տեղեկություններն ու տպագիր հազորդումները<sup>3</sup>։

Այժմ կամենում ենք տպագրության ներկայացնել այդ պոեմի բեկորները՝ որոշ բացատրությամբ, մանավանդ, որ, մեր կարծիքով, Պ. Խաչատրյանի հոգ-

1 «Սովետական Հայաստան», 1961, 29 հունվարի։

2 «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 200—201։

3 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 197—204։

վածում տեղ են գտել ճշդրության և վերանայման կարոտ մի շաբթ հարցերը: Այսպէս, օրինակ, անտեսված է պոեմի քաղաքական, հայրենասիրական ողին, ճիշտ շնորհացած նրա ստեղծման ժամանակը, հեղինակը, տաղաջախությունը, տողատումը, ուշադրությունից դուրս է թողնված պոեմի մի կարեռը տարրերակ (ձեռ. № 5623) և այլն:

Քննվող պոեմի տարրերակները գտնվում են Մաշտոցյան մատենադարանի հետեւյալ ձեռագրերում:

1. № 3884, թերթ 139ա-140թ, ժամանակ 1461—1478 թթ.,

2. № 2676, թերթ 184թ-185թ, ժամանակ XVI դար,

3. № 697, թերթ 56թ-58թ, ժամանակ XVIII դար,

4. № 5623, թերթ 215թ-216թ, ժամանակ 1653 թ.:

Սույն հոդվածը տպարանումն էր, երբ ձեռքի տակ ունեցանք պոեմի և Երկու ընդօրինակություն. դրանք են.

5. Իրանի Խոյգան գյուղի բնակիչ Ա. Տ. Հովհաննիսյանի ձեռագիր, թերթ 55թ—55թ,

6. Զմմառի Անտոնյան հավաքածու, ձեռ. № 214, թերթ 75թ—77թ, XVIII դ.:

Առաջին օրինակի մասին տեղեկացանք «Սիոն» ամսագրի 1966 թվականի № 1-ում զետեղված իրանի Խոյգան գյուղի բնակիչ Ա. Տ. Հովհաննիսյանի նշված ձեռագրի շահեկան նկարագրությունից՝ կատարված բանասեր Լ. Գ. Մինասյանի ձեռքբով: Անմիջապես նամակով զիմեցինք պր. Լ. Գ. Մինասյանին և շուտով ստացանք մեր խնդրած ընդօրինակությունը: Այն համապատասխան դուրս եկավ մեր Մատենադարանի № 5623 ձեռագրի տարրերակին և ներկայացվեց նրա հետ միասին՝ մի բնագրով: Չնայած «Սիոն»-ում այդ օրինակը նշված էր որոշես 18 տնանոց (ընդարձակ տողերով) տաղ, սակայն, ինչպես ճշգրտել է պր. Լ. Գ. Մինասյանը, իրականում այն 10 տնանոց է (մեր տողատմամբ՝ 20): Չեռագրում այդ տարրերակի ունեցած խորագիրը սխալ է, որովհետեւ այն վերաբերում է ոչ թե Մատենադարանու նախավեկային, այլ՝ Մատենադարանի նախագույն, ինչպես որ ճիշտ ասված է իր իսկ տողերի մեջ.

Թագաւոր էր թախտին

Նայ Սիւնեաց յերկրին...

Երկրորդ օրինակը մեղ տրամադրեց Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրին Լ. Ս. Խաչիկյանը՝ արտասահմանյան հայ մատենադարաններին կատարած այցելությունից հետո: Հիմքը՝ Զմմառի Անտոնյան հավաքածուի № 214 ձեռագրին է: Դա համապատասխանում է մեր Մատենադարանի № № 2676 և 697 ձեռագրերի օրինակներին. ուստի հաշվի առնվեց նրանց համատեղ բնագրում:

Օգտվելով առիթից խորին շնորհակալություն ենք հայտնում ինչպես պր. Լ. Գ. Մինասյանին, այնպես էլ ընկ. Լ. Ս. Խաչիկյանին՝ իրենց օգնության համար:

Պոեմի ստեղծման ժամանակը որոշելու առումով եղակի նշանակություն ունի նրա մի վերամշակությունը՝ կատարված 1387 թվականին<sup>4</sup>: Համեմատությունից պարզվում է, որ վերամշակողի ձեռքի տակ եղել է պոեմի արդեն

<sup>4</sup> Հ. Մանանցան, Հ. Ա. Ճառյան, Հայոց նոր վկաները, Վաղարշապատ, 1903, էջ 137: Ժամանակագրական որոշ աղբյուրներում 1387 թվականի փոխարեն նշված է 1384 թվականը (ան' ու. Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրություններ», Բ, Երևան, 1956, էջ 381, 392):

խիստ փոփոխված, աղճատված, ժողովրդականացման ուղին բռնած մի տարրերակ: Իսկ զա ցույց է տալիս, որ այդ հիմքը՝ 1387 թվականից էլ պիտի տասնամյակներ առաջ, եթե ոչ ավելի վաղ, ստեղծված լիներ: Բայց բանի որ պոեմի նյութը սերտորեն կապված է մոնղոլական բռնատիրության հետ, ուստի նրա ծագումը պիտի որոնել XIII—XIV դարերում, ավելի ճիշտ՝ 1236—1387 թվականների սահմաններում, բայց ոչ երբեք 1387 թվականի մեջ կամ, մասնավանդ, դրանից հետո:

Պ. Խաչատրյանը, ծանոթ լինելով 1387 թվականի մշակմանը, փորձում է պոեմի ստեղծման ժամանակը հասցնել XV դարի առաջին տասնամյակ: Ըստ նրա, նկարագրված գեղքերը պիտի կատարված լինեն «XIV դարում, ոչ ուշ, քան XV դարի սկզբները», իսկ պոեմը, հավանաբար, պիտի գրված լինի Առաքել Սյունեցու կողմից, «որի գրական գործունեության եռուն շրջանը... համընկնում է XV դարի առաջին տասնամյակին»: Բայց, ինչպես տեսանք, պոեմի՝ 1387 թվականին արդեն այլափոխված և վերամշակված լինելու փաստը ոչ մի հիմք չի տալիս նրա ծագումը որոնելու նաև այդ թվականից հետո: Ճիշտ չէ, հենվելով այդ, ապա տաղաշափական հաշիվների, առանձին դարձվածքների վրա, ենթադրել, թե նրա հեղինակը կարող է լինել Առաքել Սյունեցին:

Պոեմի էությունն ըմբռնելու առումով կարևոր է նրա նախնական ծավալի հարցը: Նրա տարրերակներից առաջինը բաղկացած է 29 տնից, երկրորդը՝ 18, երրորդը՝ 17, իսկ չորրորդը՝ 19: Դրանցից նախնական բնագրին ավելի մոտ է առաջինը և լոկ այդ օրինակն է, որ օգնում է նկատելու նրա ակրոստիքային կառուցվածքը և որոշելու ծավալը: Եթեում է, որ այն շարադրված է հայոց այրութենք կազմող ակրոստիքոսով, ուր ամեն մի տառով գրված է շորս տուն: Այստեղից էլ՝ պոեմի ընդհանուր ծավալը՝  $36 \times 4 = 144$  տուն կամ 576 տող: Եթե վերջից կցված լինեին նաև հեղինակի անունն ու այլ տեղեկություններ բովանդակող տներ, որը հավանական է, ապա պոեմի ծավալն ավելի մեծ կլիներ: Ուստի պահպանված ամենաընդարձակ տարրերակն անդամ կարող է նրա լոկ մեկհինգերորդ մասը լինել: Մյուս տարրերակներում կան մի քանի այնպիսի տներ, որոնք շկան առաջինի մեջ և կարող են նկատի առնվել: Այդպիսիներից են, օրինակ, «Զ» տառով կամ ավելի ճիշտ, «Զայն» բառով սկսվող տները, որոնց մի մասը գրված է «Այն» ձևով: Դրանց թիվը, սակայն, շորսից անցնում է, ուստի հետո են աճել, հարազատ կարող են լինել թերեւս հերոսի երեսի, աշքերի, հոնքերի և բերան-ատամների գովքին նվիրված տները, որովհետև պոեմի տարրերակներում ու մշակման մեջ դրանք ավելի շատ են հանդիպում:

Տ 5623 ձեռագրի օրինակում առկա է մի ամբողջ տուն, որպիսին շկան և ոչ մի այլ օրինակի մեջ: Այդտեղ հերոսի մասին ասվում է,

Նայ ի յոտսն անկեալ  
իւրոյ շալատին.  
«Հաղար զինացհար, զինահար,  
Թո՛ղ խոստովանիմ»:

Իր բովանդակությամբ զա արժեքավոր նորություն է, հարազատությունը հեղինակին՝ հավանական: Այս նույն ձեռագրում նորություն է նաև հետևյալ տան հիմնական մասը, որը նորից բուրում է հարազատությամբ.

Աև շորերշաբթին  
Զխաբարըն բերին,  
Թէ բոկիկ և մերկ, զիսիրաց  
Զայն ըմբընեցին:

Այս հինգ-վեց տնից բացի, թերեւ կարելի է մի-երկու տուն էլ հաշվի առնել վերամշակված օրինակից, հատկապես «Ո՞վ» բացականչությամբ սկսվող ներք. այսուհետեւ մերկառորդից՝ այս ընդհանուր քանակը չի կարող անցնել:

Քննվող ստեղծագործության ծավալի որոշումը կարենոր է մի քանի, այդ թվում՝ նրա ժանրը որոշելու առումներով: Մենք այդ երկը կոչում ենք պոեմ՝ նկատի առնելով ծավալը՝ 576 տող, եթե ոչ ավելի: Բայց լոկ դա՛շատ քիչ կլիներ: Այսուհեղ մեղ համար առաջնահերթ նշանակություն ունի նրա գործող անձանց բավականին մեծ թիվը («Ժողովուրդն», «Պինուրքն շարին», «Երոսը, հայրը, մայրը, ինչպես նաև հերոսի անձնավորված ծին»), նրանց՝ պոեմում հեղինակից անկախ հանդես գալու եղանակը, զործողության զարգացումը և այլն: Իր ամբողջությամբ մեր միջնադարյան շափածոյի անդաստանում սույն գործը, ամենից առաջ, կապվում է պոեմի ժամանակի հետ և ներկայացնում՝ նրա զարգացման մի որոշակի աստիճանը:

Սյունյաց իշխան և եպիսկոպոս Ստեփանոսին նվիրված այս պոեմը ուշագրավ է նաև իր տաղաշափուրյան, տների կառուցվածքի և հանգավորման արվեստով: Բանաստեղծության այս ձևը, առհասարակ շատ ստեփանում զարգացում և այլն: Իր ամբողջությամբ մեր միջնադարյան շափածոյի անդաստանում սույն գործը, ամենից առաջ, կապվում է պոեմի ժամանակին հետևող համարված № 6885 ձեռագրում.

Կալով առ խաչին  
Երկնից բարձողին  
Եւ հառաշմամբ ի վեր նայեր  
Սուրբ կոյսն և ասեր...<sup>5</sup>

Այս ձեն անհամեմատ շատ է սիրել Առաքել Սյունեցին, որից հետո, շատ շանցած, այն համարյա մոռացության է մատնվում:

Բանաստեղծության այս տեսակին էլ բնորոշ է կանոնավոր քառատող տունը. առանձնահատուկը, սակայն, նրա տողերի կառուցվածքն ու հանդավորման եղանակն է: Այսպես, ամեն տան 1, 2 և 4-րդ տողերը բաղկացած են 5-ական վանկերից, իսկ 3-րդը՝ 8-ական: Տողերի մեջ էլ փոխնիփոխ միմյանց են հաջորդում հայոց լեզվի համար այնքան բնորոշ յամբ-անտառեստյան ոտքերը: Եթե հաշվի շառնենք 3-րդ տողի մի անապեստը, որը կարծես ավելորդ է, ապա կստանանք 5 վանկանի տողերով ստեղծված մի սովորական քանաստեղծություն: Սակայն, խնդիրն էլ հենց նրանումն է, որ 3-րդ տողում միշտ էլ առկա է այդ անսպասելի թվացող անապեստը, որով խախտվում է քանաստեղծության միապաղպությունը և լցվում յուրատեսակ հնշական թարմությամբ: Այն ձգված է ողջ ստեղծագործության միջով՝ որպես տաղաշափական ինքնատիպ դարդ.

<sup>5</sup> Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 6885, թերթ 112ր. Տե՛ս նաև «Պատմա-քանասիրական հանդես», 1964, № 3, էջ 200:

Սաղիկ էր սարին,  
Մանիշակ՝ դաշտին,  
Կարմիր ու սպիտակ իւր երեսն  
Դարձաւ ի դեղին:

Հանգավորումն էլ իր հերթին է օգնում, որ 3-րդ տողն ավելի քան ինք-նատիւ հնչի, որովհետեւ այստեղ, որպես կանոն, 1, 2, 4-րդ տողերը, որ հավա-առավանկ են, նաև նույնահանգ են. մինչդեռ 3-րդ տողերը միշտ անհանգ են, ապատ՝ հանգավորման անհրաժեշտությունից: «Որպես կանոն» ենք ասում, որովհետեւ մի քանի տներում նկատվում են շեղումներ: Այսպես, մի-երկու գեղքում հանգավորված են լոկ 2 և 4-րդ տողերը, որ մասամբ արդյունք է հեղինակային դիտավորության, մասամբ էլ՝ խաթարման: Բացառված չէր, որ պոեմի որոշ տները հանգավորված լինեին իրարահաջորդ զույգ-զույգ տողե-րով, ինչպիսին է № 6885 ձեռագրից բերված նմուշը, սակայն, պոեմի պահ-պանված բեկորներում այդպիսիները չկան:

Դեռք է նկատել, որ մասնագետները ցարդ, բացի մի-երկու գեղքից, ճիշտ շեն վարվել բանաստեղծության այս տեսակը տողատելիս և տնատելիս: Այս-պես, օրինակ, Զ. Ալիշանը 1848 թվականին «Բազմավէպ»-ում տպագրելով սույն պոեմի 1387 թվականին վերամշակված օրինակը, նրա ամեն մի տունը ներկայացրել է ոչ թե շորս, այլ երկու տողով<sup>6</sup>: Այսպես են վարվել նաև Հ. Մա-նանցանն ու Հ. Աճառյանը՝ «Հայոց նոր վկաներ»-ում այն վերահրատարա-կելիս<sup>7</sup>: Նրանց օրինակին է հետեւ նաև Պ. Խաչատրյանը: Ահա թե ինչ տեսք է ստանում բանաստեղծության տունը՝ նման տողատման ժամանակ.

Դաշն եղեալ՝ բանին, վրձիորն հատին:

Ասէ. «Դուք տաշիր պատասխան այն ծածկագիտին»<sup>8</sup>:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, բեյթական խորթ տան մեջ առաջին տո-ղում խլացված է երկու հանգ, մինչ բանասիրության նպատակն է հետամուտ լինել արվեստի ամեն մի նրբությանը և բացահայտել, գրսեորել դրանք: Իսկական տողատման ժամանակ այդ տունն ստանում է հետեւյալ տեսքը.

Դաշն եղեալ բանին՝  
Վրձիորն հատին.  
Ասէ. «Դո՛ւք տաշիր պատասխան  
Այն ծածկագիտին»:

Այս առումով ինդրին համեմատաբար ճիշտ է մոտեցել բանասեր Մ. Պո-տուրյանը՝ Առաքել Սյունեցու համապատասխան բերթվածները տողատելիս: Միայն թե նա էլ կանգ է առել կես ճանապարհին՝ ստեղծելով եռատող տներ.

Անձառ և անքրնին, ծաղիկ լուսածին,  
Բորբոքեալ վառիմ քո սիրովդ՝  
Սուրբ աստուածածին<sup>9</sup>:

Այստեղ ճիշտ են տողատված վերջին երկու տողերը, իսկ առաջինը՝ ոչ:

6 «Բազմավէպ», 1848, էջ 341—343:

7 Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, Հայոց նոր վկաները, Վաղարշապատ, 1903,

էջ 149—150:

8 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, Ա 2, էջ 199:

9 Մ. Պոտուրյան, Առաքել Սյունեցի և իր բերթուածները, Վենետիկ, 1914, էջ 53:

Ուշագրավ է, որ Մ. Պոտորյանը ԺԱ. քերթվածի մեջ երկու տուն, ակրոս-  
տիքոսի՝ այդ տեղից սկսած այլ բնույթ ստացած լինելու պահանջով, ստիպ-  
ված, ճիշտ է տողատել: Ահա այդ տներից մեկը.

Տառապեալ հոգին  
էկեալ առ մարմին,  
Բամ գործոց շարեացըն ծածկեալ  
Յայնժամ յայտնեսցին<sup>10</sup>:

Բանաստեղծը (Ա. Սյունեցի), որ այդ տնից սկսել է հոգել իր անունը՝ «Տեր Առաքեալ», պարզորոշ դիտակցել է, թե ինչ կառուցվածք ունեն իր ոտա-  
նավորի տողերն ու տները, երբ ամեն տառով սկսել է նոր տողը: Բանասերը (Մ. Պոտորյան), սակայն, հասնելով այդ ակրոստիքոսի բացահայտմանը, որիվ շի թափանցել բանաստեղծության տողատման, տնատման, հանգավոր-  
ման, հետևասկես և տաղաշափության նրբությունների մեջ: Այդուհանդերձ, Մ. Պոտորյանը, ինչպես նշեցինք, մասամբ արդեն ճիշտ էր վարվել: Հետա-  
քրքրական է, որ Պ. Խաչատրյանը, փոխանակ շարունակելու Մ. Պոտորյանի  
սկսածը, լոելլայն փոխում է նրա տողատումը, վերականգնելով, ինչպես ինքն  
է ասում, «Երկատող տան» սխալ փորձը՝ եռատող տները ներկայացնում է եր-  
կուական տողերով, իսկ դրանց համար որպես հիմք նշում է Մ. Պոտորյանի  
հրատարակությունը:

Դողանշեալ նորին ընդ ուտել պրտղին,  
Հառաշմամբ գոշէր մորմոքեալ իւր սիրտն ի փորին<sup>11</sup>:

Հանգերի խլացումների ու տողասահմանների անտեսումներն ակնբախ են:  
Քննվող տաղաշափությամբ է շարադրված նաև Գրիգորիս Աղթամարցու մի  
տաղը, որը մասնագետների կողմից մերթ ճիշտ է տողատվել ու տնատվել:  
մերթ էլ՝ սխալ: Այն ճիշտ է, օրինակ, Ն. Ակինյանի հրատարակության մեջ.

Անեղին տաճար,  
Բանին բարերար,  
Գերազոյն գովեալ, Տիրամայր,  
Դու յամէն լեզուէ.  
Տիրամայր, որ զաստուած ծընար<sup>12</sup>:

Նույն երգի տարրերակի ոչ ճիշտ տողատման ու տնատման հանդիպում  
ենք Ե. Փեշիկյանի հրատարակման մեջ:

Անեղին տաճար — Բանին բարերար — Գովեալ Տիրամայր  
Դու ամէն լեզուէ, (է՛), Տիրամայր, որ զաստուած ծընար.  
Երգեաց Գարբիէլ — Զանեղն Մանուէլ — Էացաւ ի քէն, Տիրամայր,  
Ընկալաւ մարմին, (է՛), Տիրամայր, որ զաստուած ծընար<sup>13</sup>:

<sup>10</sup> Անդ, էջ 70, 71:

<sup>11</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 204:

<sup>12</sup> Ն. Ակինյան, Գրիգորիս Ա. Կաթողիկոս Աղթամարցի, Վիեննա, 1958, էջ 10:

<sup>13</sup> «Բազմավէպ», 1932, էջ 216: Այստեղ՝ համանման մի այլ («Անձարին աաձար, բանին հաշտարար...»)՝ սխալ տողատումով:

Այստեղ առկա է կրկնակ. «Է», Տիրամայր, որ զաստուած ծընար», որը ն. Ակինյանի կազմած բնագրում երևան է զալիս լոկ առաջին տան վերջում, իսկ Ե. Փեշիկյանի հրատարակածի՝ բոլոր տներից Ըստ երեսութիւն, դա Հետո է ավելացված, ուստի իրավացի է ն. Ակինյանը, ասելով. «Այս տողն ավելորդ կերեա»<sup>14:</sup>

Հետաքրքրական է, որ բննվող այդ երգի բոլոր տները, բացի սկզբի 3-ից, նույնահանգ են, շնչարշած ամեն տան երրորդ տողի վերջին-անապեստ բառը, որն այստեղ կրկնակի դեր կատարող միննույն «Տիրամայր» բառն է: Հենց այս բոլոր տողերի (և այն էլ նույնահանգ) հանգավորումն է օգնել, որպեսզի որոշ մասնագետներ տաղի տողատումն ու տնատումը ճիշտ կատարեն:

Եզրակացությունը պարզ է: Սյունյաց տեր Ստեփանոսի ձասին գրված ողբը, ինչպես նաև այդ տաղաշափությամբ գրված մյուս երգերը, պիտի տողատվեն կարճ տողերով (5—5—8—5) և ներկայացվեն բառատող տներով:

Երդ, ինչպե՞ս պիտի հրատարակվեն բննվող պոեմից մեզ հասած բեկորները: Ինչպես երեսմ է Պ. Խաչատրյանի համապատասխան նշումից<sup>15</sup>, նա ի մի է բերել երեք տարրերակներն էլ, կազմելով մի բնդհանուր բնագիր: Հետաքրքրության համար, անշուշտ, այդ ձեր կարող է իմաստ ունենալ, գիտական առումով, սակայն, այն լիբրժեք լինել չի կարող: Ընդհակառակը, կարող է թյուրիմացությունների դուռ բացել:

Մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ պոեմի առկա 6 տարրերակներից 2, 3 և 6-րդը, բնագրագիտական առումով կարող են ներկայացվել մի բնդհանուր բնագրով, իսկ 4 և 5-րդը՝ մի ուրիշ: Ինչ վերաբերում է առաջինին, ապա այն չի կարող այժմ միացվել որեւէ խմբի հետ, ուստի պիտի ներկայացվի առանձին: Չուկել այդ բոլորը մի բնագրում սխալ կլիներ, որովհետեւ կալահանգվեր բռնի հարմարեցում և անապացուցելի վերապաստվորում: Այդ սկզբունքով էլ ահա տաղագրության ենք ներկայացնում բոլոր 6 օրինակները՝ 3 խմբով:

Եթե երբեք արտասահմանում կամ այլ վայրերում պահպանվող հայերեն ձեռագրերից երեան գան այս ստեղծագործության նոր և առավել ընդարձակ տարրերակներ, ապա թերեւ այն ժամանակ հնարավոր լինի պոեմի գիտական բնագիրը վերականգնելու փորձ կատարել:

Այժմ անդրադառնանը պոեմի բովանդակությանը:

Վերեւում ցույց տվինք, թե որքան պահպանվոր են այդ ստեղծագործության պահպանված բեկորներն, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ընդհանուր հաշվով: Այդուհանդերձ, առեւա տարրերակների օգնությամբ, հնարավոր է դառնում մոտավոր գաղափար կազմել այն շարժառիթների մասին, որոնք ընկած են պոեմի համար նյութ դարձած դեպքերի հիմքում: Այս առումով առաջնահերթ տեղ են դրավում գործող անձանց մասին պահպանված տեղեկությունները, ինչպես նաև աշխարհագրական երկու վայրերի՝ Սյունյաց աշխարհի և Թավորիկ քաղաքի հիշատակումները, կառված նկարագրվող դեպքերի հետ: Գործող անձանցից մեկը կոչվում է «Մեծ Դիւանի»: Դա նրա պաշտոնի անունն է, անձնանունը չի պահպանված: Այս «Մեծ Դիւանին» ունի երկու կին, մեկը ել-հութլու անունով, իսկ մյուսի անունը չի պահպանված: «Մեծ

14 Ե. Փեշիկյանի տպագրած օրինակը վրիգել է թե Ն. Ակինյանի և թե Մ. Ավելարեղյանի («Գրիգորիս Աղթամարցի», 1963, էջ 164—166) ուշագրությունից, այլապես նրանք այլ տեսք կտային տաղի կազմվող բնագրին:

15 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 197:

Դիւանիի» և այդ անանուն կնոջ ամուսնությունից էլ սերված է պոեմի հերոսը՝ Ստեփանոսը: Վերջինիս մասին պոեմում եղած տվյալների համաձայն նա զաստիարակվել է Թավրիզում, իսկ հետո հաստատվել Սյունյաց աշխարհում՝ որպես այնտեղի եպիսկոպոս և իշխան: Մոնղոլական բռնատիրության պայմաններում այսպիսի բարձր պաշտոնը ինքնին ենթադրում է համապատասխան ընտանիք և ուժեղ կապեր՝ տիրող ու տեղացի աղղեցիկ շրջանների հետ:

Պոեմի պակասավորության պատճառով մենք այժմ հստակ ու որոշակի պատկերացում չունենք նաև «Մեծ Դիւանի» ընտանիքի բոլոր անդամների, նրանց ազգային ու կրոնական պատկանելիության վերաբերյալ: «Մեծ Դիւանին» ինքը կարող էր մոնղոլ լինել կամ օտարազգի: Այդ պաշտոնին հասած հայ գործիչ մեզ ծանոթ չէ և հավանաբար ոչ միայն չի եղել, այլև չեր կարող լինել: Բոլոր դեպքերում նա մոնղոլական իշխանության խոշոր ներկայացուցիչներից մեկն էր: «Մեծ Դիւանիի» կինը՝ Էլ-Խութլուն (տարրերակ՝ Խէլ-Խութլու), ամենայն հավանականությամբ, մոնղոլուհի էր<sup>16</sup>: «Մեծ Դիւանիի» մյուս կինը, որի անունը չգիտենք, ինչպես երևում է պոեմի ողջ ընթացքից, եղել է հայուհի: Անկախ հոր այլազգի լինելուց, Ստեփանոսը եղել է ոչ միայն հայ, այլև Սյունյաց աշխարհի եպիսկոպոս:

Արդ, ո՞վ էր նրա հայրը որպես գործիչ, որ կոչվում էր «Մեծ Դիւանի»: Հենց «Դիւանի» բառն իր օտար ծագմամբ ենթադրում է օտար տիրողների հետ կապված պաշտոն: Այս տեսակեաից ուշագրավ տեղեկությունների ենք հանդիպում ժամանակակից հեղինակների մոտ: Այսպես, օրինակ, Ստեփաննոս Օբրելյանի մոտ «Մեծ Դիւանին» նույն է, ինչ «Սահիպ Դիւանին»: Թվարկելով իր ժամանակի մոնղոլական բարձրապաշտոն անձանց, նա գրում է, «...և Զիուշին և Աւրղուզանին, որք չին ի վերայ գատաստանացն, և մեծ դիւանին Սաղադազին՝ բարերարոյ շհտին, որ էր ի վերայ ամենայն հարկաց աշխարհիս»<sup>17</sup>: Իսկ, ինչպես գիտենք, Մեծ Դիվանի Սաղադոլին, իրոք, Սահիպ Դիվանի էր<sup>18</sup>: Մեծ Դիվանի հաստատության ու պաշտոնի հանդիպում ենք նույն հեղինակի նաև հետեւյալ տողերում ու պարբերություններում: «...Արդունն, որ էր վազիր և պազաղ (տեսուշ) կարգեալ ի մեծ զանէն ի վերայ ամենայն աշխարհիս, այսինքն հրամանատար ամեննեցուն և իշխանող արքունի հարկացն և մեծ դիւանին»<sup>19</sup>: Հայոց Սմբատ իշխանը «գնաց ի մեծ դիւանն արքունի առ Արդունն և Սահիպն ի Դավրէժ»<sup>20</sup>: Նույն Սմբատ իշխանը «...տայ զղուստը նորա (Ավազի) զիուշաքն ի կնութին մեծ հօջային Սահիպ Դիւանին, որ ունէր ի բան զամենայն աշխարհս տէրութեան Ապազայ զանին... և նա էր Դիւանի զլավն և վերակացու ամենայնին»<sup>21</sup>:

<sup>16</sup> Ռաշիդ-Աղ-Դինի մոտ, մեզ հետաքրքրող ժամանակներում, այդ անունով («Ալի-Կուլուց», «Խոլո-Կուլուց») հիշատակված են մի քանի բարձրատառնմիկ կանայք, որոնցից եղ Ճեկը, սակայն, չի համապատասխանում մեր պոեմի Էլ-Խութլուին (Տե՛ս Փազլուլահ Ռաշիդ-Ադ-Ջան, Ջամի-ատ-Տավարիք, Ալ, Բակու, 1957, ստ. 17, 66, 100, 133, 192):

<sup>17</sup> Ստեփաննոս Օբրելյան, Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 468:

<sup>18</sup> Յրիկ, Դիւան, Սյուն-Յորբ, 1952, էջ 59—61:

<sup>19</sup> Ստեփաննոս Օբրելյան, Աշխատա, աշխատ., էջ 412—413:

<sup>20</sup> Անդ, էջ 419:

<sup>21</sup> Անդ, էջ 418—419:

Այստեղ և նման ուրիշ տեղերում «Սահիպ Դիւանի», «Մեծ Դիւանի», «Դիւանի գլուխ» ձեերը նույն իմաստն են զրսեռում՝ նկատի ունենալով մոնղոլական բռնատիրության պետական խոշորագույն հաստատություններից մեկը կամ նրա գլուխ կանգնած պաշտոնյային։ Բերված հատվածներում խոսուն տվյալներ կան նաև վերջիններիս ուժի և կարողության մտսին։ Այս առումով ամենորդ չեր լինի հիշել նաև Ֆրիկի հետեւյալ տողերը՝ Սահիպ Դիվանիի վերաբերյալ։

Սահիպ Դիւանին ասենք, որ մըլքեց զերկիր նա բոլոր,  
Հանցեղ սիասաթ ունէր, որ շունէր ոչ ոք թագաւոր։  
Զինը որ խանորայք կային՝ յափն ունէր զինը բզմի խընծոր...<sup>22</sup>

Ահա թե մոտավորապես ինչպիսին է եղել մեր պոեմի «Մեծ Դիւանին»։ Արդ, ինչպե՞ս է եղել, որ այդ օտար պաշտոնյայի որդին ու մի կինը հայ ևն եղել։

Հայտնի է, որ մոնղոլների ժամանակ էլ տիրողների և տեղացիների միջև, պաշտոնական-քաղաքական նպատակներով, խնամմիական կապեր էին ստեղծվում։ Նման կապերը բացառված չէին նաև Սահիպ Դիվանիների, ուստի և մեր պոեմի «Մեծ Դիւանիի» համար։ Այս տեսակետից ուշագրավ է, օրինակ, Խօջա Շամս-էդ-Դին Զուվեյնիի ամուսնությունը՝ Ավադ Աթարեկի դստեր՝ Խոշաքի հետ, որի մասին համապատասխան քաղվածք կատարվեց վերեռմ։ Այս ամուսնությունից սերված զավակներից մեկի՝ Զաքարեի մի արձանագրության մեջ կարդում ենք։

«Յուսովն անմահին Աստուծոյ ևս Զաքարէ որդի Սահիպ Դիւանին և պարոն Խաչարին, թոռն Աթարադ Ավագին որդոյ Աթարադ Խվանէի, վասն մեր յերկար կենդանութեան և փրկութեան հոգոյ իմոյ վեր կալայ, որ ի Բջնի...» և այլն<sup>23</sup>։

Ահա այն ժամանակների օտարազգի Սահիպ Դիվանիներից մեկի մի զավակ՝ սերված Հայ կնոջից, որը ոչ միայն կրթությամբ է հայ, այլև ազգային պատկանելիության մասին ունեցած սեփական դիտակցությամբ, իրեն կապում է ոչ թե հոր նախնիների, այլ մոր՝ Աթարադ Խվանեի և Աթարակ Ավագի հետ։

Մոտավորապես այդպիսի ամուսնության և այդպիսի դաստիարակության արդյունք է եղել նաև քննվող պոեմի հերոսը։

Այժմ, կարծես հասկանալի է դառնում այն տեղը, որ ունի Թավրիդ քաղաքն այդ պոեմում, Քանի որ Սահիպ Դիվանիները և մոնղոլական մյուս իշխողները նստում էին Թավրիդում, ուստի այնտեղ պիտի ապրելիս լիներ նաև մեր պոեմի «Մեծ Դիւանին» իր կանանց և զավակների հետ։ Այդտեղ է ահա, անցկացել նրա Ստեփանոս որդու դինվորական դաստիարակությունը և նախնական կրթությունը։

Թավրիդ քաղաքին  
ի մեծ մէդանին  
Մէկ մանուկ շրկայր, որ քաշէր  
Զազեղ պարոնին։

22 Ֆրիկ, Դիւան, էջ 374—375։

23 Գ. Ալիշան, Ալրարատ, Վենետիկ, 1890, էջ 273։

Թարվէզ բաղարին  
Մէջ շատ հեծելին  
Զհումք ու զուրափ կու առնէր  
ԶԱՅԵՏԱՐԱՆԻՆ:

Ահա, իր ուժով ու գիտությամբ աշքի ընկնող և ըստ պոեմի հավասարը շունեցող այս զավակին է, որ հայրը հետո հանձնարարում է Սյունիքի կամ նրա զավառներից մեկի հոգնոր ու աշխարհիկ գործերի կառավարչությունը:

Այստեղ ուշագրավ է մի ուրիշ հանգամանք. Սահիպ Դիվանիի ընտանիքում հայ հոգնորականի ծնունդն ու դաստիարակությունը: Ինչպես ցույց են տալիս փաստերը, զա ևս հնարավոր է եղել հատկապես մինչև Ղազան խանի տիրակալությունը, երբ զեռ մոնղոլները քրիստոնեության դեմ մշակված թշնամանք շունեին և մահմեդականություն շեին ընդունել: Այդ ժամանակ երեսներոն իշխողները հանդես էին գալիս որպես քրիստոնեության հովանավորներ, բարեկամներ: 1264 թվականին մեռած Հովափու ղանի և նրա կնոջ մասին Ստեփաննոս Օրբելյանը գրում է. «Բայց մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւնն քրիստոնէից՝ Հովափու ղանն մեռանի ի յ713 թուին. ընդ նմին և ամենօրհնեալն Տօնդուզ խաթունն՝ կին նորա, որը զեղակուր եղեն ի բազմահար Խօջայէն Սահիպէն, որ և զիտէ տէր (թէ) ոչ ինչ էին ընդհատ բարեպաշտութեամբ քան զկոստանդիանոս և զմայր իւր Հեղինէ...»<sup>24</sup> Նրանց որդին ևս, ըստ պատմիշի, եղել է «սիրող քրիստոնէից»<sup>25</sup>:

Այս առումով ուշագրավ զեմք է եղել նաև Արդուն զանք, որի զեմ զավագրություն կազմակերպող Բուղայի հասցեին Ֆրիկը գրում է.

Բուղա՛, զու ո՞նց կամիր նենցել  
Աստուածաղիր թագաւորին,  
Զոր քրիստոնեալին ամէն հաւար  
ի յաստուծոյ կու խնդրէին:  
Արդուն զանքն աստուած եղիր,  
Ո՞վ է յաղթող Արդուն զանին...»<sup>26</sup>

Այս փաստերը մեզ միաժամանակ տանում են գեղի XIII դարի երկրորդ կեսը և ենթադրել տալիս, թե քննվող պոեմն էլ այդ ժամանակների կամ առնվազն XIV դարի սկզբների արդյունք է, այլապես անհնարին կլիներ կարծել, թե Թավրիզում, մոնղոլների իլիւանության նստավայրում, Մեծ Դիվանիի զավակ Ստեփանոսը՝

Մէջ շատ հեծելին  
Զհումք ու զուրափ կու առնէր  
ԶԱՅԵՏԱՐԱՆԻՆ:

Այսինքն, Ավետարան ու քրիստոնեություն էր բարողում:

Դա ցույց է տալիս, որ նրա հայրն էլ, այս առումով, համամիտ է եղել և՛ որդու, և՛ նրա մոր հետ, որը հավանաբար հայ իշխանական տոհմերից մեկի դուստրն էր:

24 Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 419,

25 Անզ,

26 Ֆրիկ, Դիվան, էջ 422:

«Մեծ Դիւանիի» երկյուղածությունը՝ քրիստոնեական կրոնի հանդեպ որոշակիորեն ցույց է տրված նաև պոեմի այն տողերում, ուր նա իր Ստեփանոս որդու մասին ստիպված մահվան դատավճիր կայացնելիս, ասում է.

«Քահանայապետ է...»

Կարգին պատկառիմ...»:

Իրերի այս գրության մեջ, թվում է, թե Սահիպ Դիվանիի ընտանիքում պիտի ներհաւկություններ չլինեին: Բայց այդպիսիք երեան են գալիս և ըստ էության էլ, անպայման պիտի իրենց զգացնել տայիին: Հենց այն հանգամանքը, որ մոնղոլական բռնատիրության խոշոր գործիչներից մեկը այդքան սերտորեն կապված էր Հայերի, այսինքն, նվաճվածների հետ, ինքնին չէր կարող շշարժել մոնղոլների որոշ շրջանների հակակրանքը: Այնուհետև, ինչպես ցույց են տալիս փաստերը, մոնղոլական ղեկավար շրջաններում էլ անպակաս են եղել ներքին գավառությունները, արյունահեղ սաղրանքները, որոնց զոհերից են եղել Սահիպ Դիվանիներ Խոջա Շամս-էդ-Դինը, Սադաղոլին և ուրիշներ: Մոտավորապես նման մի փոթորիկ է պայթել նաև մեր պոեմի «Մեծ Դիւանիի» իրավասության սահմաններում:

Ինչպես նշեցինք, նրա մի կինը՝ էլ-Խութլուն, հավանաբար, մոնղոլուհի էր: Այս ճյուղով Սահիպ Դիվանիի ընտանիքը կարող էր կապված լինել մոնղոլական թեկ հետ: Փաստորեն այդ ընտանիք կոշվածն էլ ո՞չ թե մի սովորական ընտանիք էր, այլ ընտանեկան մեջ բարդ միավոր, որի մեջ զուգորդված էին երկու վտանգավոր կողմերի ծայրերը: Եթե Ստեփանոսն ու իր մայրը ներկայացնում էին նվաճված Հայաստանը, ապա էլ-Խութլուն՝ նվաճողների ներկայացուցիչն էր: Պարզ է, որ նման պայմաններում միշտ էլ հնարավոր էին անախորժություններ և բախումներ:

Այդպես էլ եղել է: էլ-Խութլուն, ինչպես կարելի է ննիադրել, հանդիսացել է մոնղոլ տիրողների ականավոր տոհմերից մեկի գուտարը, և, հավանաբար, հարազատների և այլ բռնակալների դրդումով, մեծ եռանդով խառնվել՝ պետական գործերին: Նրա այդ գործունեությունը շատ ծանր է նստել «ժողովրդի» վրա, որն էլ խնդրել ու համոզել է Ստեփանոսին՝ սպանել նրան՝ որպես բոլոր տեսակ շարիքների մոր: Այունյաց տնօրեն Ստեփանոսն էլ, որ ավելի քան որեւէ մեկը, մոտիկից է ծանոթ եղել իրերի դրությանն ու էլ-Խութլուի հասարակական վնասակարությանը, ի կատար է ածում ժողովրդի ցանկությունը՝ սպանելով էլ-Խութլուին: Հետո, հավանաբար, էլ-Խութլուի բարեկամների խումրը շտապում է Ստեփանոսի հոր մոտ, հավատացնելու, թե Ստեփանոսը գալիս է իրեն սպանելու: Հայրը սոսկում է, տատանվում, բայց նրան ստիպում են համաձայնելու Ստեփանոսի մահվան դատավճուին: Ստեփանոսը զիխատվում է:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, արտաքնապես մի ընտանիքի ներսում, բայց ըստ էության մոնղոլական տիրութի մի հատվածում կատարված արյունահեղությունը, իր հիմքում ընկած պատճառներով, կրում է ոչ թե ընտանեկան բնույր, այլ՝ հասարակական, բաղադրական:

Բանաստեղծը, անշուշտ, այն արյունոտ օրերին, երբ սպանվել է էլ-Խութլուն, զաժանորեն պատժվել՝ Ստեփանոսը, երբ հավանաբար հալածվել են վերջինիս համախոչներն ու հարազատները, չէր կարող բացորդ խոսել դեպքերի մանրամասնությունների և իր վերաբերմունքի մասին: Նա խիզախու-

թյուն է ունեցել տվյալ պայմաններում լոկ ողբաւ հերոսին և նրա հիշատակը վառ պահել ժողովրդի մեջ։ Ուստի նա մեղազրել է Ստեփանոսի համախոհներին, որպեսզի անմեղ դուրս բերի նրան։ Եվ ահա պոեմի հենց այդ հատվածի մեջ էլ ամփոփված է վերոհիշյալ դեպքերի քաղաքական, հասարակական բնույթին ու ոգին։ Հեղինակը հարց է տալիս և ինքն էլ պատասխանում։

Բանիւ ո՞ պատրեաց  
Զիշխանն Սիւնեաց.  
Այն խառնիձաղանչ ժողովորդն  
Եւ աստուածուրաց։

«Բա՛րձ դու ի կենաց  
Զմայրն ամէն շարեաց.  
Մերժեայ ի կենաց զէլ-Խութլուն,  
Լեր երկայնակեաց։»

Բարբանջեալ բարձին  
Զիսելք խիկարին,  
Ետուն սպանանել զիւր մաւրուն,  
Հաւը աշից հանին։

Անկախ բանաստեղծի զիրքից, այստեղ որոշակիորեն երեսում է ժողովրդի աստվածուրացության հասնող հանդգնությունը, որը խոնված ամրոխով իր դառն վիճակն է պատմել Սյունյաց երկրի հովանավորին և նրանից փրկություն խնդրել՝ իր վրա ծանրացող շարիքներից ազատվելու։ Այստեղ էականը ո՛չ էլ-Խութլուի անձնավորությունն է և ո՛չ էլ նրա ազգային ու կրոնական պատկանելիությունը, այլ այն շարիքները, որ հասցրել է նա ժողովրդին։ Իրադարձությունների պետական, հասարակական, քաղաքական ոգին այնքան ուժեղ է եղել, որ հասել է մինչև «Մեծ Դիւանիին» սպանելու պատմությանը։ Իրո՞ք Ստեփանոսն ուզեցել է նուև նրան սպանել, թե դու լոկ հակառակորդների հերյուրանքն է, շգիտենք<sup>27</sup>։ Պոեմը, սակայն, ներկա վիճակով չի հերքում այդ հանգամանքը։ Ընդհակառակը, նա վկայում է, որ էլ-Խութլուի մահից հետո նրա անունը տվող անդամ չկա. ոչ զինվորքն շարին, որ բողոքում են Ստեփանոսի զեմ և ոչ էլ «Մեծ Դիւանին» շեն հիշում նրան։ Պետք է նկատել սակայն, որ պոեմից այստեղ պակասում է երկու տուն, մեկը «Բ» տառով, իսկ

27 Այս կապակցությամբ հանդիպում է լոկ մի ակնարկ։

Ետուն սպանանել զիւր մաւրուն,  
Հաւը աշից հանին։

Երկրորդ տողի համաձայն, Ստեփանոսը, էլ-Խութլուն սպանելու պատճառով, հոր աշքից ընկել է, այսինքն, արժանացել է նրա ատելությանը։ Պիտի ասել, սակայն, որ հաջորդ տողերում հայրը որդու նկատմամբ ոչ թե ատելություն, այլ սեր ու զօրովանք, ինչպես նաև հոգնոր առումով պատկառանք է տածում («Դերեցաւ զերին, Զհաւատայր բանին... Այն է իմ որդին», «Էւայր սիրտն ի փորին», «Կարգէն պատկառիմ» և այլն)։ Պարզ է, որ այստեղ զործ ունենք հակառակության, ուստի և աղավաղման հետ։ Այս տեսակետից ուշադրավ է № 697 ձեռագրի տարբերակը, ուր «Հաւը աշից հանին» տողի փոխարեն ունենք. «Հօրն աշացըն հին (հանին)», այսինքն, հօրն են որպու աշքից հանել, ատելի դարձել։ Այս ձեն ավելի ներդաշն է պոեմի պահպանված մասի ողուն։ Ուստի հնարավոր է, որ Ստեփանոսը նաև հորն սպանելու միտում ունեցած լինի։

№ 2676 ձեռագրում էլ-Խութլուի անվան փոխարեն առկա է «լուսատուշ բառը՝ զործածված թերես որդու իմաստով՝ հետպայում»։

մյուսը՝ «Գ»: Այդուեղ, հավանաբար, որոշ միտք պիտի զրուերված լիներ նախ էլ-Խութլուի մասին, ապա՝ «Մեծ Դիւանիի» դեմ նյութված կամ մտացածին դավադրության շուրջ: Պահպանված հաջորդ տան մեջ խոսքը գնում է միմիայն երկրորդ հարցի ուղղությամբ, և նշված պակասավորության հետևանքով թողնում այն անճիշտ տպավորությունը, թե էլ-Խութլուի սպանության պատճառով են ոմանք շտապել «Մեծ Դիւանիի» մոտ, հանգամանք, որը շփոթեցրել է նաև Պ. Խաչատրյանին. մինչդեռ այստեղ, ինչպես նշեցինք, խոսվում է լոկ «Մեծ Դիւանիի» մասին.

Գումարեալ եկին  
Առ Մեծ Դիւանին,  
Զի «Գայ» սպանանէ զքեզ, այսաւը,  
Ահա քո որդին»:  
Գերեցաւ գերին,  
Զհաւատայր բանին.  
«Մի՛ զիս ձեռնամուս առնիցէք,  
Այն է իմ որդին»:

Ինչպես երեսում է, «Մեծ Դիւանիին» համոզողները սովորական զինվորնորկամ բանսարկուներ շեն եղել, այլ ուժի ու իրավունքի լիազորներ, որոնք կարող էին անդամ այդ բարձր պաշտոնյացին սպանել.

Ասեն. «Տո՛ւր ի մեզ, զի սպանցուք  
Այսաւը քո զորդին...  
Եթէ ոչ տայցես մեզ Հրաման՝  
Մեոցի՛ս ընդ նմին»:

Ըստ երեսլիթին, նրանք կամենում էին լոկ օրենքի ձեւը պահել, ստանալ «Մեծ Դիւանիի» հրամանը, որպեսզի Ստեփանոսի մահապատիժը ապօրինի շնամարիլիր: «Մեծ Դիւանին» տեղի է տալիս: Դա խոսում է նրան ստիգողների, իրոք մեծ ու կարող ուժի մասին, կապելով նրանց ավելի բարձրադիր մարմինների հետ:

Իսկ այս ամենը ոչ մի կասկած չի թողնում ասելու, որ նկարագրվող դեպքերը հասարակական-քաղաքական բնույթ են ունեցել: Եթե էլ-Խութլուն համարվել է «Մայրն ամէն շարեաց» և նրա զինակիցները՝ «զինուորքն շարին», ապա պարզ է, որ այդ ամենի հիմքում ընկած են եղել բռնատիրական ծայրաշեղ շարաշահումներ՝ ուղղված նվաճված մողովրդի դեմ:

Պոեմի պակասավորության պատճառով լրիվ չի ընկալվում, թե Ստեփանոսը Սյունիքում գտնվելով, ինչպես եղավ, որ պատժվեց «Մեծ Դիւանիի» նստավայրում՝ թափրիզում: Դա պիտի բացատրել այսպիս: Նա Սյունիքից հատուկ ծրագրով մեկնել է թափրիզ, այնտեղ սպանել էլ-Խութլուին և ինքն էլ-այնտեղ գլխատվել: Ինչ վերաբերում է հերոսի հարազատ մորը, ապա նա պոհմում առկա անուղղակի տվյալների համաձայն, գեթ այդ օրերին, գտնվելիս է եղել Սյունիքում: Այս առումով հետաքրքրական են որդու վերադարձին սպասող մոր ապրումները: Նա ոչինչ շգիտե, միայն թե հարազատ մոր կարուտով անհամբեր սպասում է սղացի զալուն: Գտնվում են մարդիկ, անշուշտ, բռնատիրության ներկայացուցիչներից, որոնք խարելով հեղնում են նրան, տաելով, թե շուտով դալու է քո որդին, գնա բնդառաջ, որ գեմքի քրտինքը

սրբես: Մայրն շտապում է ընդառաջ և ճանապարհի ծայրին նստած սպասում՝ որդուն:

Իւր մայրն ասացին.  
«Կու գայ քո որդին,  
Սրեկ և սրբէ զքրտունքն  
Ճակտին ու երեսին»:  
Իւր մայրն էր նըստել  
Դէմ ճանապարհին,  
Գիտէր, թէ կու գայ քաւթալով  
Իւր պարոն որդին:

Տարբերակներից մեկի համաձայն որդին ձիով էր գալու. Հանգամանք, որը ևնթաղրում է իրոք, հեռու ճանապարհ.

Իւր մայրը նըստէր  
Դէպ ճանապարհին,  
Գիտէր, թէ կու գայր ձիաւոր  
Իւր պարոն որդին:

Որդին, սակայն, չի գալիս, դալիս են բոթարեները՝ իրենց հետ բերելով նրա արյունոտ գլուխար:

Այս բոլորը համոզում են, որ իրոք, Ստեփանոսի մայրը հեռու էր «Մեծ Դիւանիի», էլ-Խութլուի գտնված վայրից և սպասում էր այնտեղ գտնվող որդու վերադարձին: Բայց քանի որ որդին պիտի Սյունիք վերադառնար, ուստի և հարազատ մայրը գտնվելիս է եղել Սյունիքում: Այս հանգամանքը ցայտուն կերպով երեւմ է նաև մոր վշտին ու ողբին շարակցված այն տողերից, ուր ասկում է.

### Հուր բորբոքեցաւ Յեղեգեց Զորին...

Անկախ իր ծրագրերի ու գործողությունների ընդգրկման լայն կամ նեղ շրջանակներից, Սյունյաց առաջնորդ Ստեփանոսը հանգես է գալիս որպես հայ բնակչության բողոքի անձնազոհ արտահայտիչ, արժանանալով նրա համբողհանուր ու սրտագին սիրուն: Հասկանալի է, որ նա մենակ չէր կարող մեկնած լինել Թավրիդ և միայնակ նախաձեռնել իր վրիժառությունը: Նրա հետ թերեւս նաև ուրիշներ էլ են զոհվել, հալածվել, պոեմը սակայն նրան է նվիրված և նրա' մասին է խոսում, ճիշտ այնպես, ինչպես 1387 թվականի նրա մշակման մեջ: Չնայած այդ թվականին Սերաստիայում շատերն էին զոհվել Բուրհանդին<sup>28</sup> բռնակալի դեմ նախապատրաստված ապստամբության պատճառով, սակայն ստեղծված ողբում սգացվում է միայն Ստեփանոս Սերաստացին:

Պ. Խոչատրյանի հոդվածում պոեմի քաղաքական, հայրենասիրական բնույթն իսպառ անտեսված է: Զգիտես ինչու, նա հետապնդել է մի նպատակ. ցույց տալ, որ «ողբի նյութը վերցված է ավատական ընտանիքի ոլորտից: Հարազատների արյունուշտ արարքների պատկերման հենքի վրա հեղինակը

28 Վերօնիշյալ ժամանակագրություններում՝ «Բուրհան Ղաղի»:

կարողացել է ցուցադրել մարդկային հոգեվիճակներ՝ ծանր ապրումներ, անմխիթար վիշտ և տառապանք կորսված կյանքի համար»։ Ստեփանոսի կատարած սպանությունը նա դիտում է որպես «Հարազատ մոր կենդանությամբ այլազգի խորթ մայր ունենալու՝ քրիստոնյային անպատվարեր ու հակառարույական վիճակի» դեմք բողոքի արտահայտություն։ Կատարված դեպքերի ու պոեմի հիմքում նա տեսնում է հոր և որդու հակադրությունը՝ կենցաղային հաշիվների պատճառով։ «Դեմ-հանդիման կանգնած են հայրը՝ անձնական բարօրության ու դիրքի «խոհեմ» ընթացքով, և որդին՝ քրիստոնյա մարդու և հարազատ մոր պատվի շահախնդրությամբ»։ Հենց այստեղ է գլխավոր սխալը։ Պոեմում միմյանց դեմ կանգնած են ո՛չ թե հայրն ու որդին, այլ մի կողմից՝ էլ-Խութլուն և «զինուորքն շարին», իսկ մյուս կողմից՝ Հերոսը, «ժողովուրդն» և ուրիշները։ Նույնիսկ զժվար է որոշել հոր իսկական տեղն այդ թերում։ բայց պոեմի արդի տվյալների՝ նրա վիճակը երկակի է, բարդ՝ ընկած այդ երկու թերքի սահմանամիջին։ Ոչ հստակ պատկերացումը այդ կողմերի մասին՝ մթագնել է նրա բուն բովանդակությունը։

Այնուհետև, եթե անգամ, հակառակ փաստերի ու տրամաբանության, ընդունենք այն մեկնաբանությունը, որ տրված է հոգվածում, դարձյալ շենք կարող անտեսել պոեմի հասարակական բնույթի բովանդակությունը՝ ի դեմս «ժողովրդի» գործոն մասնակցության՝ էլ-Խութլուի, որպես ամեն տեսակ շարիքների մոր, սպանության նախապատրաստություններին։ Այդպես կարող ենք ասել նաև «Մեծ Դիւանիի» և էլ-Խութլուի ազգային ու կրոնական պատկանելության վերաբերյալ, թույլ տալով այն անհավանական կարծիքը, թե նրանք էլ կարող էին հայ լինել։ Դրանից համարյա ոչինչ չի կարող փոխվել, որովհետև նրանք մնալու են նորից իրենց բարձր դիրքում, որը մոնղոլական բռնատիրության հենման հզոր կետերից մեկն էր՝ նվաճված երկրներում։ Այդ կետի դեմ ուղղված ձնշվածների ամեն մի հարված, որը նպատակ ուներ վերացնել «զմայրն ամէն շարեաց», ամենից առաջ խոսում է պատմա-քաղաքական իրադրությունների մասին։ Եվ դա է կարևորը։ Իսկ դա անտեսել է Պ. Խաչատրյանը։ Նրա հոգվածում փորձ անգամ չի արված բացատրելու «Մեծ Դիւանիի» ովլ լինելը՝ հասարակական դերի առումով, որի պատճառով էլ շատ խնդիրներ այնուղ անհասկանալի են մնացել։

Կա նաև մի ուրիշ հանգամանք, նյութի նման ներկայացումը, անկախ հեղինակի ցանկությունից ու նպատակից, ճիշտ չէ ոչ միայն փաստական տեսակետից, այլև տեսականորեն։ XIII—XIV դարերում բանաստեղծական միտքը դեռ զարգացման այն աստիճանին չէր հասել, որպեսզի ելակետ ունենար ստեղծագործական նյութ որոնելը՝ ազգագրական, կենցաղային, ընտանեկան այնպիսի «մանրութներ» վերաբարելու նպատակով, ինչպիսիք մեկնաբանված են հոգվածում, և այդ ամենը՝ հոգեբանական վիճակներ կերտելու համար։ Մեկնաբանության նման եղանակը ենթադրում է շատ ավելի ուշ դարերի պատմություն ու գրականություն։

Ներկայացվող պոեմի անանուն հեղինակը նպատակ է ունեցել վերաբարել իր օրերի համար խոշոր երեսութ հանդիսացած և ժողովրդի ազատասիրական զգացմունքների հետ կապված մի իրական ու ցնցող դեպքի ողբերգական ընթացքը։ Եվ նա այդ գործը կատարել է մեծ վարպետությամբ, միաժամանակ տալով գործող անձանց ներաշխարհի մոտավոր պատկերը և Սյունյաց աշխարհի վիշտն ու մորմոքը՝ սիրված հերոսի թարմ հիշատակի

առջեւ: Հարցի վերջին կողմն արդեն հետևանք է, և ոչ ելակետային նպատակ, ավելի ճիշտ, այն միջոց է, ստեղծագործական եղանակ, որը պիտի շատ բարձր գնահատվի:

Նպատակ չունենալով՝ հանգամանորեն անդրադառնալու այս հարցին, ասենք, որ այստեղ առանձնապես հետարրրական են ժողովրդական հոգեբանությանն ու մտածողությանը հարազատ այն տները, որոնց մեջ գովերգվում են հերոսի ուժն ու գեղեցկությունը, նրա մոր վիշտն ու բողոքը և, մանավանդ, անտեր մնացած ու զումում փակված ձիու անհանգիստ դոփյունն ու վրնջոցը: Վերջինս, ասես, զգալով տիրոջ հետ կապված դժբախատությունը, փորձում է փշրել շղթաները, արգելքները և հասնել օգնության:

Խըրխընցէր իւր ձին,  
Այն բաւզ բագաւին,  
Կոխէր և կտրէր զպիստուն,  
Սալարկն յախոռին:  
Խաւէր մերմազին.  
«Բացէ՛ք զդրունին,  
Երթանը, թէ հասնիմք աւգնական  
Սիւնեաց իշխանին»:

Այստեղ էլ, սակայն, շպիտի մոռանալ հարցի հասարակական կողմը-այս տողերի միջոցով հեղինակը տվել է ոչ թե անբան ձիու «տենչն» ու կաշկանդվածությունը, այլ՝ տեղի բնակչության:

Անզուգական է մոր նկարագիրը՝ շորած ճանապարհի ծայրին, ձեռքերը զեպի երկինք մեկնած և «վրէ՛ժ» աղաղակելիս:

Համբարձեալ զձեռուին  
Դէմ արարողին,  
Զգոգն արեամբ լցեալ և խնդրէր  
Վրէ՛ժ սպանողին:

Այս տողերի միջոցով սոսկ մոր անձնական ողբն ու վրեժինդրությունը է, որ դրսեորել է հեղինակը: Դա Սյունյաց աշխարհի և մասնավորապես Եղեգյաց Զորի բնակչության վիշտն ու բողոքն է, որից կարծես բոցավաված Հրկիղվել է հայրենի բնաշխարհը.

Հուր բորբոքեցաւ  
Յեղեգեց Զորին,  
Հրդեհեալ կիղեաց զբոլոր զայն  
Բնակիչք երկրին:

Վերևում տրված մեր բացատրությունների հենքի վրա է, որ խևապես պատճառաբանվում, իմաստավորվում է հայրենասիրական այս վեհաշունչ ու վարակող տրամադրությունը, ստեղծելով լիարժեք ու միաձույլ ամբողջություն՝ պոեմի ոգու մասին: Եվ, ամենից առաջ, օտար բռնակալության զեմկաղմակերպված բողոքի, ժողովրդի վշտի ու աղատասիրության իր այդ ոգու պատճառով է, որ այդ պոեմը հետագայում այնքան շատ է սիրվել և նույնիսկ մշակվել, կապվելով համանման ուրիշ զեպքի հետ՝ ուղղված Բուրհանդին բռնակալի դեմ:

Առանձին ուշադրություն է գրավում պոեմի և մասնավորապես նրա առանձին հատվածների ժողովրդական շունչն ու ոգին, բառն ու բանը, որոնք գալիս են մասամբ հեղինակից, մասամբ էլ՝ մշակողներից: Ըստ որում, նկատելի է, որ հետագա փոխությունների ժամանակ պոեմը, կորցնելով հանդերձ իր նախնական ամրողությունը, միաժամանակ ձգտել է առավել ամփոփ ու քնարական տեսքի:

Մոտավորապես այսպիսին է նորահայտ պոեմը՝ իր ձեր ու բովանդակության հիմնական գծերով. որպես այդպիսին այն մեր միջնադարյան շափածոյի քաղաքական-հայրենասիրական հաղվագեստ գոհարներից մեկն է՝ արժանի առավել մեծ ուշադրության:

### ՏԱՐ. ՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ. ՍԻԲՈՒԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Աւրհնեալ է աստուած  
Հայր և սուրբ Հոգին.  
Փա՛ռք ներողութեան աստուծոյ  
Որդույն միածնին:

5 Ահայ զգովքն ասեմք  
Տէր Ստեփանոսին.  
Եղբարք, լսեցէք հաւասար  
Մահ տարաժամին:

Աղամն առաջին՝  
10 Ստեղծուածն անեղին,  
Պատրանաւր շարին՝ ի զրախտին՝  
Հանեալ վանեցին:

Ա՛յս է, զոր խարեաց  
ԶԱղամն և ասաց.  
15 «Եթէ կերիցես ի պտղոյն՝  
Դու լիցիս աստուած»:

Բանիւ ո՛ պատրեաց  
Զիշխանն Սինեաց.  
Այն խառնիճաղանչ ժողովուրդն  
20 Եւ աստուածուրաց.

«Բա՛րձ դու ի կենաց  
Զմայրն ամէն շարեաց,  
Սերժեայ ի կենաց զէլ-Խութլուն,  
Լեր երկայնակեաց»:

Արքանուր. 26 թ. № 3584, թերթ 139 և — 140 թ.:

1 Զ և ո. Աւրհնեալ:

25 Բարբանջեալ բարձին  
Զիսելք խիկարին,  
Ետուն սպանանել զիւր մաւրուն,  
Հաւր աշից հանին:

Գումարեալ եկին  
30 Առ Մեծ Դիւանին,  
Զի «Գայ» սպանանէ զքեզ, այսաւր,  
Ահա քո որդին»:

Գերեցաւ զերին,  
Զհաւատայր բանին.  
35 «Մի՛ զիս ձեռնամուխ առնիցէք,  
Այն է իմ որդին»:

Գոշեցին կրկին  
Զինուորքն շարին.  
Ասեն. «Տո՛ւր ի մեզ, զի սպանցուր  
40 Այսաւր քո զորդին»:

Գողաց վերըստին,  
Լայր սիրտն ի փորին.  
«Քահանայապետ էօ, ասէ,  
«Կարգէն պատկառիմ»:

45 Դարձեալ վերըստին  
Գոշեն զայրագին.  
«Եթէ ո՛չ տայցես մեզ հրաման՝  
Մեոցի՛ս ընդ նմին»:

Գաշն եղեալ բանին  
50 Վըճիռն հատին.  
Ասէ. «Դուք տաշիք պատասխան  
Այն ծածկագիտին»:

Վայդեցին զարիւնն  
Տէր Ստեփանոսին.  
55 Արիւնն գոշէր առ Քրիստոս՝  
Որպէս զԱրելին:

28—29-րդ տողերի միջև պակասում է երկու տուն, մեկը «Բ» սկզբնատառվ, մյուսը՝ «Գ»:

39 2 ե. Ասէ:

43 2 ե. և փիւ է:

46 2 ե. գոշել:

49 2 ե. ա զ բ ու մ «Գաշն» բառը՝ եղծված: Բնրեցվում են վեշին տառեր. ճշտում ենք  
№ 7707 ձեռագրի հիման վրա:

53 «Կայդեցին»-ը բերես «Քափեցին»-ի փոխարեն, ուով «Բ» տառով սկսվող տների բա-  
նակը կլանար: Այս և նախորդ տան միջից պակասում է ե—Ը տառերով սկսվող մասը:

Սաղիկ էր սարին,

Մանիշակ՝ դաշտին.

Կարմիր ու սպիտակ իւր երեսն

60 Դարձաւ ի դեղին:

Թառմեցաւ ծաղիկն,

Էն վարդն ի թփին.

Կարմիր ու սպիտակ իւր երեսն

Դարձաւ ի դեղին:

65 Թավրէղ քաղաքին

Զարդ էր հեծելին՝

Հէնց, զինչ որ ամիրայ սալթանն,

Ի իւրեն հաւատին:

Թաղվար էր թախթին

70 Այն Սիւնեաց բերդին.

Նայ հուրմն բռաւան կու վարէր

ԶԱւետրանին:

Իւր մաւրն ասացին.

«Կու գայ քո որդին,

75 Արեկ և սրբէ զքրտունքն

Շակտին ու երեսին»:

Իւր մալրն էր նըստել

Դէմ ձանապարհին,

Գիտէր, թէ՝ կու գայ քաւթալու

80 Իւր պարոն որդին:

Յայնմ առաւօտին

Սև շորերշարթին

Բերին ու ձգեցին արիւնու

Զգլուխն ի զոգին:

85 Լոյր, խանդաղատէր

Սրտիկն ի վորին,

Պագնէր և զնէր արիւնու

Զերես-երեսին:

57—60-րդ տողեւն իւրենց տեղում չեն («Օ» տեսքում): Այս և նաշուզ տաճ եւկուզ կեսեր՝ պատահարար կրկնված:

70 Զ և ո. Սըսայ. ուղղեցինք բառ № 5623 ձեռագրի:

81 Զ և ո. Յայմն. Բառ իմաստի՝ տունը յուր տեղումն է, բառ սկզբնառարի («Յ»), ու վկզրի բառն աղավաղված է: Եթե զա էլ «Ե» տառին է պատկանում («Ե» յայն առաւօտին»), ապա պակասում է այդ տառով սկզբով ևս մի տուն:

Հաց ասէր զերին,

90 Գրդուէր զիւր որդին,

«Որդեա՝ իմ, որդեա՝ կ, սավթան շալ,  
Մաւրս մասն և բաժին»:

Խըրխըրնչէր իւր ձին,

Այն բաւղ բաղաւին,

95 Կոխէր և կտրէր զպիսաւուն,  
Մալարկն յախոռին:

Կաւսէր մեքմաղին.

«Բացէր զդրուենին,

Երթամք, թէ հասնիմք աւգնական

100 Սիմեաց իշխանին»:

Շունք ածէր իւր մերն

Դէմ արարաւղին.

«Աստուած, զու զիտիս, որ է՞ս մէկս,

էլ որդի շունիմ:

105 Կաւսրեաց, լուսին,

Ի մէջ զիշերին.

Արե՛, մի՛ ծագել զու այսաւը,

Չտեսնում զիմ որդին»:

Համբարձեալ զձեռուին

110 Դէմ արարողին,

Զգոզն արեամք լցեալ և խնզրէր

Վրէ՛ժ սպանողին:

Հուր բորբոքեցաւ

Յեղեգեց Զորին.

115 Հրդեհեալ կիզեաց զբոլոր զալն

Բնակիչը երկրին:

92 «Ե» տառով սկսվող տներից պակասում է եւկուս:

95 Զ և ու. զախաւուն:

97 «Մեքմաղին» բար նախապես գրված է եղել «Մեմաղին» ձեռք: Զեռագրում՝ 93—96 և 97—100-րդ տողերով կազմված տները՝ ետևուած, տեղափոխեցինք բառ իմաստի և բառ մյուս տարբերակների:

101 Զ և ու. մէրն:

101—104-րդ տողերը «Մ» տնախմբից են և իւնց տեղում չեն: «Մ»-ի մի այլ տունն Էլ՝ վերեսում (տե՛ս 57—60-րդ տողերը):

105 Զ և ու. լուսին:

108—109 Այս տողերի միջից պակասում են «Ե» տառով սկսված մեկ տուն. «Մ»-ով՝ եւկուս (մյուս եւկուսը տե՛ս վերեսում՝ 57—60 և 101—104-րդ տողեր), «Լ»-ով՝ չորս և «Հ»-ով՝ եւկուս:

109 Զ և ու. զձեռն:

116 Այս տողից նետո պակասում են 2—Ք տառերով սկսվող բոյր տները:

## ՏԱՐԱԾԵՓԱՆՌՈՒՆ

Աւրհնեալ է աստուած  
Հայր և սուրբ Հոգին,  
Փա՛ռք ներողութեան աստուածոյ  
Որդոյն միածնին:

5 Ահա՛յ, զողըն ասեմ  
Զտէր Ստեփանոսին.  
Եղբարք, լսեցէք հաւասար  
Զմահ տարաժամին:

Բարբաջեալ բարձին  
10 Զիսելքն խիկարին,  
Ետուն սպանանել զինէլ-Խութլուն,  
Հաւր աշաց հանին:

Իւր մայրն նստէր  
Դէմ ճանապարհին,  
15 Գիտէր, թէ տի զայր փութալով  
Իւր պարոն որդին:

Յայնմ առաւօտին  
Սև շորեքշաբթին  
Բերին արքնուտ, ձգեցին  
20 Զգլուխն ի մաւր զրկին:

Թառմեցաւ ծաղիկն,  
Այն վարդն ի թփին.  
Կարմիր ու սպիտակ իւր երեսն  
Դարձաւ ի դեղին:

## Աղբյուրներ

Ա=2եռ. № 2676, թերթ 184թ—185ա:  
Բ=2եռ. № 697, թերթ 56թ—58ա:  
Ը=Զման, ձեռ. № 214, թերթ 75թ—  
77ա:

## Խորագիր

Յ Անխորագիր: Ը Տաղ սրբոյն Ստեփա-  
նոսի:

## Բնագիր

Հ Ա Աւշեալ:  
4 ԵԾ միածնի:  
5 Ա Հայ (Ա-ի համար տեղ է բողնված):  
ԵԾ տունը չի:

9 ԱԾ բարբաջեալ:

10 Յ Զիսելքն ի: Ը Զիսելքըն:

11 Ա Ետուն սպանանել զլուսատուն:  
Յ Յետուն: Ը զիսելքութլուն:

12 Ա Հաւր աշացըն լուս: Յ Հօրն աշացըն  
Հան]ին: Ը Հօր աշացըն Հան]ին:

13 Ա զայր քաւելով:

14 Ա պարոն շիք: Յ յորդին:

15 Յ Յայն: Ը Զայն:

16 Յ Եւ վիս Սև:

17 Ա Ճօրն: Յ Զգլուխն ի Ճօր կրգին:  
Ը զըրկին:

18 Յ Եւ վիս Սև:

19 Ա Ճօրն: Յ Զգլուխն ի Ճօր կրգին:

20 Ա Ճօրն: Յ Յայն ի Ճօր կրգին:

21 Ա Ճօրն: Յ Յայն ի Ճօր կրգին:

22 Ա Ճօրն: Յ Յայն ի Ճօր կրգին:

23 Ա Եւ վիս Սև:

25 Հայր, խանդաղատէր  
Մաւր սիրտն ի փորին.  
Պազնէր արրնոտ և դնէր  
Զերեսն—երեսին:

Հաց ասէր զերին,

30 Գրգուէր զիւր որդին.  
«Որդեա՛լ իմ, որդեա՛լ, սովորան շահ,  
Մաւրս մասն ու բաժին:

✓ 35 Զայն բոլոր երեսն  
Տէր Ստեփանոսին՝  
40 Որպէս թէ լուսին էր բոլորած՝  
ի տասնուշինդին:

✓ 45 Այն ծով-ծով աշերն  
Տէր Ստեփանոսին՝  
Որպէս թէ կամթեզ էր վառած՝  
40 ի մէջ տաճարին:

✓ 55 Այն կամար ուներն  
Տէր Ստեփանոսին՝  
Որպէս թէ կամար էր շարած՝  
Աւագ խորանին:

✓ 60 Այն մայտան ճակատն  
Տէր Ստեփանոսին՝  
Որպէս թէ զումբէթ էր սարած՝  
Մեծ կաթողիկին:

✓ 65 Այն ստոտիք բերանն  
50 Տէր Ստեփանոսին՝  
Որպէս թէ սկիհ էր և տուփ՝  
Այն սուրբ խորհրդին:

25 Յ խանդաղատէր:

26 Յ Մօր:

27 Ա արենուտ: Յ Փոքներ: Պընէր:

28 Յ յերեսին: Յ Երեսն:

29 Ա Մայր և ասէր զերին: Յ [ա]սեր:

30 Ա Գոգէր: Յ Գրգուէր:

31 Ա սուլտան շախ:

32 Յ Մօրս:

33 Յ յերեսն: Յ Երես:

34 Ա Ստեփանոսին: Յ Բատեփանոսին:

35 Ա բոլորաց: Յ է փխ էր: Յ էր չի:

36 Ա ի ԺԵ-ին: Յ և տասնուշինդին:

37 Յ արերն:

38 Ա Ստեփաննոսին:

39 Յ կանդեզ:

40 Յ օնքերն:

41 Ա Ստեփանոսին:

42 Ա բաշած էր կամար:

43 Յ Աւագ:

44 Ա Ճաւան: Յ Ճայտան: Յ Ճայտան:

45 Ա Ճաւան: Յ Ճայտան: Յ Ճայտան:

46 Ա Ստեփանոսին: Յ Բատեփանոսին:

47 Ա Կումբէթ: Յ Ապարձ: Յ թէ չի: Գում-

պէթ էր այլած:

48 Յ Ապարձ բերան:

49 Ա ակն էր: Յ ակին: Յ իսկին:

50 Յ Հաղորդին:

- 53 Հայր մայրն և ճրձէր,  
Խնդրէր զիւր որդին,  
55 Աղքայր, Հառաշէր. գալարէր  
Աղիքն ի փորին:
- 56 Հայէր ի յերկինա  
Յոյժ արտասուագին.  
«Արմ՝, մի՛ ծագէր զու այսար,
- 60 Չտեսնում զիմ որդին»:
- Թագաւորն երկրին,  
Այն Սիւնեաց բերդին,  
Նայ հուրմն ըռաւան կու վարէր  
ԶԱԵՍՏԱՐԱԿԻՆ:
- 65 Խըրխընչէր իւր ձին,  
Հայր պաւզ բատավին,  
Ոտաւըն կտրէր զպիսաւոն,  
Սալարքն ախոռին:
- Խաւէր միմաղին.
- 70 — Բացէ՛ք բղդոնին,  
Որ երթամ, Հասնիմ յաւզնութին  
Իմ թագաւորին:

- 53 Ա Հայր փիս. Հայր: Ը ճէր:  
54 Յ Վիճէր և քակէր: Ը Վիճէր և կանչէր:  
55 Յ և Հառաշէր: Ը և Հառշէր:  
56 Յ արտասուագին:  
57 Յ այսօր: Ը ծագէր:  
60 Ա Որ շտեսնում: Յ Չրտեսնում:  
61 Յ Թագաւոր յերկրին: Ը Թագ[աւոր]:  
62 Ա Սրայ: Յ Սրայ բերթին: Ը Սրայ  
բերդին:  
63 Ա Նայ զհուրմն ըռաւան: Յ հուրմ ու  
Հրաման: Ը Նայ հուրմ ու Հրաման

- 70 յայէր:
- 64 Ը Աւետար[ան]ին:
- 65 Յ Խըրխնչէր զիւր:
- 66 Յ պօզ պհտաւին: Ը պօզ ողէտաւին:
- 67 Յ Ոտորն կոտրէր զպիսաւոն: Ը  
Սալիքն կոտորէր զպիսաւան:
- 68 Յ Սալարք: Ը Չալարք:
- 69 Ա Խաւէր մէկ աղին:
- 70 Յ զզուրնին: Ը բղդոնովին:
- 71 Յ Հասնիմ օգնութին: Ը աւզնութին:

## ՏԱՊ ԱՏԵՓԱՆՈՍԻ

Աւրհնեալ է Աստուած,  
Հայր և սուրբ Հոգին.  
Աւրհնեալ, աղաթել առ Աստուած,  
Որդին միածին:  
 5 Ահայ զգովքն ասեմ  
Տէր Ստեփանոսին.  
Հաւսար լսեցէք, եղբարք,  
Զմահ տարածամին:  
թագուոր էր թախտին  
 10 Այն Սինեաց երկրին,  
Զօնումն ու զուրաւի կու առնէք  
ԶԱւետարանին:  
Զինչ վարդն ի լիփին,  
Մանուշակ սարին,  
 15 Էնցեղ թառամեր զեղեցիկ  
Մորուքն յերեսին:  
Զինչ վարդ վառուցած  
Կարմիր երեսին:  
Էնցեղ, զինչ նշխարք և բաժակ՝  
 20 Սուրբ պատարագին:  
Զիւր ծով-ծով աշուեր  
Տէր Ստեփանոսին՝  
Էնցեղ, զինչ կամար, որ քաշած՝  
Սուրբ եկեղեցին:  
 25 Զիւր կամար ուներ  
Տէր Ստեփանոսին՝  
Էնցեղ, զինչ կամար, որ քաշած՝  
Ի սուրբ խորանին:

## Ազրունեւ

Ա=Զեռ. № 5623, թերթ 215ա—216ա:  
Բ=Իրանի Խորան զյուղի ձեռագիր,  
թերթ 55ա—55բ:

## Խորագիր

Ա Խորագիր չի բ: Յ Տաղ Ստեփանոսի  
Խախավլիկային է ասացեալ:  
Բնագիր

3 Յ աղաթելը յառ:

4 Ա միայնին: Յ Չի միածին:

6 Ա Ստեփանոսին:

7 Ա իմ եղբայրը: Յ Հաւսար լսիցէք

8 Ա տարայժամին: Յ տարածամինին:

9 Ա թախթին: Յ թագաւոր:

10 Յ նայ վիս. Այն, յերկրին:

11 Ա Զօնումն ու զուրաւին: Յ Հուքն և  
զիրաւի առնէք:

12 Յ Աւետարանին:

15 Ա Էնցեղ զեղեցիկ թառամեր: Յ Են-  
ցեղ թառամեր: Չի զեղեցիկ:

16 Յ երեսին:

17 Ա Զինչ վարթըն վառած:

19 Յ Այնպէս: Սուրբ վիս զինչ:

20 Յ Ի պատարագի:

21 Յ աշերին:

23 Յ Այնպէս: աւազանն:

24 Յ Ի սուրբ:

25 Յ ուներն:

26 Ա Ստեփանոսին:

27 Յ Այնպէս, զինչ կամար կապած:

28 Յ չի բ:

Զիւր լատիֆ բերան,  
 30 Ասմունքն ի միջին՝  
     էնցեղ, զինչ շինած զմբեթով  
     Սուրբ եկեղեցին:  
  
 Զիւր լատիֆ շրթոնք,  
     Բարակ ալոկնին՝  
 35 էնցեղ, զինչ փոխեցաւ ծիրանի  
     Շածկոց սեղանին:  
  
 Զմոմեղէն մատունք  
     Տէր Ստեփանոսին՝  
     էնցեղ, զինչ մոմերն, որ վառն  
 40 Յաւագ սուրբ Զատկին:  
  
     Խրինչէր խոր ձին,  
     Խոր բաւզ բէղեին,  
     Կոտրէր զրխաւն ի յոտերն,  
     Մալերն յախոռին:  
  
 45 Ասէր յիւր մտին,  
     «Բացէ՛ք զղոնին,  
     Որ երթամ, հասնեմ ատենին  
     Հայոց իշխանին»:  
  
     Սև շորեքարթին  
 50 Զիսաբարըն բերին,  
     Թէ բոկիկ և մերկ, զիսիրաց  
     Զնտ ըմբըռնեցին:  
  
     Նա ի յոտսն անկեալ  
     Խրոյ չալատին.  
 55 «Հաղար զինահար, զինահար,  
     Թո՛ղ խոստովանիմ»:

- 29 Յ լատիւ բերանն.  
 30 Յ Ասմունքն.  
 31 Ա զմբեթով: Յ Այսպէս: զումայէթն.  
 32 Յ Սուրբն:  
 33 Ա շրթոնք: Յ լատիւ շրթոնքն:  
 34 Ա պոկընին: Յ Զբարակ:  
 35 Ա էնցեղ փոխեցաւ ծիրանի: Յ Այս-  
     պէս փոխեցաւ ծածկոց:  
 36 Յ Ի սուրբն ի սեղանին:  
 37 Ա 37—40-րդ տաղեր՝ 33—36-րդ  
     տաղերից առաջ: Յ մատունքն:  
 38 Ա Ստեփանոսին:  
 39 Ա Զի՞ր զինչ: Յ Յայնպէս, զինչ վա-  
     ռած մոմերն:  
 40 Ա Յաւագ: Յ Զի՞ր Յաւագ:

- 41 Ա Խրինչէլք:  
 42 Ա բէղեին: Յ Խոր բաւզէ զեխն:  
 43 Ա ի յոտին: Յ Կոտրէր զրխաւնն:  
 44 Ա Զաւերն:  
 45 Ա Խաւար ճոխ մաղին:  
 46 Ա Հասնիմ յատենին:  
 50 Ա Զիսաբարն:  
 51 Ա թէ բորիկ, զիսիրաց: Զի՞ր և մերկ:  
 52 Ա Հայն: Յ Զեալ ըմբըռնեցին:  
 53 Ա Նայ: Յ ոտն անկել:  
 54 Ա Խոր զինուրին:  
 55 Ա զինահար, զինահար: Յ Հաղար զին-  
     ար, հաղար:  
 56 Ա խոստովանին:

հեր մայրըն նըստէր  
 Դէմ ճանապարհին,  
 Գիտէր, թէ կու գայր ձիաւոր  
 60 հեր պարոն որդին:  
  
 հեր մայրըն ծընկսէր  
 Դէմ աղաւթբանին.  
 «Արարիշ վկայ այս բանիս,  
 Որ որդի շունխմ»:  
  
 65 Զգլուխն բերին,  
 Մաւր գոքն ընկեցին.  
 Առնէր և դընէր զարբնոտ  
 Երեսն—երեսին:  
  
 Ի Սըսայ բերթին  
 70 Թագուոր ի թախտին,  
 Զինչ սուլթան, փատշահ և ամիրայրն՝  
 հեր հաւանէին:  
  
 Թարվէզ քաղաքին  
 Ի մեծ մէջանին  
 75 Մէկ մանուկ շըկայր, որ քաշէր  
 Զաղեղ պարոնին:  
  
 Թարվէզ քաղաքին,  
 Մէջ շատ հեծելին  
 Զհորմ ու զուրատի կու առնէր  
 80 ԶԱՅԵՄԱՐԱՆԻՆ:

57 Բ ԽԺ Ճօրն նստէր:

58 Ա Դէպ:

59 Բ զայ օթալով:

61 Ա 61—64-րդ տողերը՝ 57—60-րդ  
տողերից առաջ: Բ ԽԺ Ճօրն ծնդրէր:

62 Բ աղօթարանին:

63 Բ Արարին:

64 Բ Որ որդի ես շունխմ:

65 Ա Զգըլուխըն:

66 Բ Մօր զիրկն:

67 Բ Առնոյր և դնէր զարբնոտ:

68 Բ Երեսի:

69—72 Ա Այս տողերը՝ շին: 70 Բ Թա-  
գուոր:

73 Բ Ի Թարվէզ քաղաքն:

74 Բ Այն մեծ մօզանին:

75 Ա Մէկ: Բ շկար:

76 Բ պարանին:

77 Ա Թարվէզ:

78 Բ Բազում հեծելին:

79 Բ Նայ Հուրմ, դատաստան առնէր:

80 Բ Առը ԱՅԵՄԱՐԱՆԻՆ:

А. Ш. МНАЦАКАНЯН

ВНОВЬ НАЙДЕННАЯ СРЕДНЕВЕКОВАЯ  
ПАТРИОТИЧЕСКАЯ ПОЭМА

Р е з ю м е

В средневековых армянских рукописях сохранились шесть неполных копий одной высокохудожественной средневековой поэмы. Здесь они представлены впервые.

Исследователь приходит к заключению, что эта, пока безымянная, поэма создана в XIII—XIV вв. и что ее темой служит трагическое событие, связанное с протестом населения Сюника, направленным против монгольского ига.

Главный герой поэмы—епископ и князь Сюника Тер-Степаннос. Отец последнего именуется «Великим Диваном», это один из монгольских сахиб-диванов.

A. SH. MNATSAKANIAN

UN POEME PATRIOTIQUE MEDIEVAL INEDIT

L'auteur donne une scrupuleuse analyse d'un poème médiéval particulièrement intéressant et d'une grande valeur littéraire, publié ici pour la première fois dans ses six variantes quelque peu défectueuses retrouvées dans six manuscrits arméniens du Moyen Age.

Selon l'auteur, ce poème anonyme remonterait au XIII<sup>e</sup> ou au XIV<sup>e</sup> siècle, le sujet se rapportant à un tragique épisode du mouvement de révolte de la population de la région de Siounie contre la tyrannie mongole.

Le héros y apparaît sous les traits de l'évêque et prince de la Siounie Stépannos, dont le père, „Grand Divan“, est l'un des „sahibs—divans“ mongols.